ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԵՐՊԻ ԽՆԴԻՐԸ

ՓՈԼԱԴՅԱՆ Մ. Ա.

Վերլուծել որևէ բայական համակարգ, որ լեզվին էլ այն վերաբերի, ընդհանրապես խրթին և տանջալից աշխատանք է: Վերջին համաշխարհային քերականական հետազոտությունները այսօր ցույց են տալիս, թե որքան բարդ երևույթներ են թաքնվում *բայ* անվան տակ: Ասեմ իսկույն, որ իմ մտադրությունը չէ կրկնել (ևս մեկ անգամ) այն, ինչ ասված է, և այլևս արծարծման կարիք չունի: Ինձ, բային նվիրված եռհատորյակում, հետաքրքրելու են միայն անպատասխան մնացած հարցերը, իսկ դրանք շատ-շատ են: Բացառությամբ սլավոնական լեզուների և, օրինակի համար, գերմաներենի, մի շարք քերականություններում (օրինակ, ֆրանսերենի) մինչև քսաներորդ դարի կեսերը մշտապես անտեսվում էր *կերպ* հասկացությունը, քանի որ այն քողարկված էր *ժամանակ* հասկացությամբ: Մ. Աբեղյանի «*Աշխարհաբարի շարահյուսություն*»-ը[1] զարմացնում է այս առումով. *կերպը* այստեղ գտնվում է կենտրոնական դիրքում (գուցե գերմաներենի ազդեցությամբ): Բայը ներկայացված է հետևյալ կերպ.

«1. Խոսքերի տեսակները ըստ բայի եղանակների, 1. 1. Բայի եղանակները, ժամանակները և կերպերը»:

Համենայն դեպս, նշեմ, որ Աբեղյանը *կերպը* ներկայացնում է որպես ժամանակներից բխող հասկացություն, այնինչ, ճիշտ է գուցե հակառակը՝ ժամանակի բխումը կերպից. բավական է չորս կերպերի մեջ մտցնել ինտերվալներ (ձգել կերպերը), և կառաջանա ժամանակը: «Բայի ժամանակներից,- գրում է Աբեղյանը,- անբաժան են և բայի կերպերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը մի որոշ ժամանակակետի՝ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ»[2]:

Աբեղյանի քննարկած չորս կերպերում (կատարված, կատարվող, կատարվելիք և պարզ) առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, այսպես կոչված, *պարզ կերպը*: Սակայն լեզվաբանի տված բացատրությունները հստակ չեն: *Պարզ կերպը* ասես կախման մեջ է մնում մյուս կերպերից, առանց տրամաբանական

---

[1] **Աբեղյան Մ.,** *Աշխարհաբարի շարահյուսությունը*, Վաղարշապատ, 1912:

[2] **Աբեղյան Մ.,** *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965:

կապի: Ահա տրված բացատրությունը՝ «*Պարզ կերպ*, որ ցույց է տալիս սոսկ գործողություն մի որոշ ժամանակակետում, առանց ուշադրություն դարձնելու նախորդ երեք կերպերին ...»:

Մոտավորապես կես դար հետո Մ. Ե. Ասատրյանը[3] ուսանողների համար գրված դասագրքում ամենայն տրամաբանությամբ ցուցակից հեռացնում է *պարզ կերպը*: Մինչ այդ, Գ. Սևակը[4] *պարզ կերպ*-ը արդեն փոխարինել էր «անկերպ» տերմինով:

Հարց է առաջանում՝ ինչո՞վ է *պարզ կերպը* անբաժան բայի ժամանակներից, եթե այն մյուս կերպերի հետ ոչ մի կապ չունի: Նշանակում է՝ կա մի կերպ, որը ժամանակներից անկախ է, և այն ոչ թե *քերականական* կարգ է, այլ *բառային* և *իմաստաբանական*: Գ. Ջահուկյանը, օրինակ, ստիպված է կատարյալ և անկատար կերպերը առանձնացնելուց անմիջապես հետո ավելացնել. «Այս բոլոր ասածների հիման վրա կարելի է անել այն բնական եզրակացությունը, որ բայական արմատներին ինքնին հատուկ է կերպային արժեք...»[5]: Այս հարցում ճիշտ մոտեցում ունի Աղայանը, երբ նկատում է, որ կերպն ու ժամանակը «հաճախ միասնաբար են հանդես գալիս և փոխադարձաբար լրացնում իրար»[6]: Գերմանական քերականագետները սա դեռ քսաներորդ դարի քսանական թվականներին էին նշել[7]: Գերմանացիք այն անվանում էին *Aktionsart,* և այն տրամաբանորեն տարբեր էր *Aspekt* հասկացությունից: Չպետք է գործընթացի տեսակը շփոթել գործընթացի կերպի հետ, այսինքն՝ նույն մակարդակի վրա դնել ներունակ ռեֆերենցիան (գործընթացը, ինչպես կա, խոնարհված ձևից անկախ) և բայական առկայացած ձևը:

Մարաթոն վազել շարույթը բառային մակարդակում նշում է մեկ ամբողջական ավարտված գործընթաց, բայց այն կարող է առկայանալ և որպես կատարված կերպ՝ *Ողոսը վազեց մարաթոնը,* և որպես կատարվող կերպ՝ *Ողոսը վազում էր մարաթոնը:*

Այսպիսի տարբերակումը կարելի է, իհարկե, անօգուտ համարել: Քանի-քանի քերականագետներ ի վերջո անտեսել են այն: Բայց հարցը հենց այն է, որ ժամանակների վերլուծումը և ճշգրիտ բնորոշումը անհնարին է, եթե հաշվի չես առնում *Aktionsart*-ը: Սա բայի ուսումնասիրման ժամանակ քերականական «թակարդներից» առաջինն է:

Կերպի հարցը ինքնաբերաբար իր հետ բերում է խնդրառության հարցը, քանզի կերպը միմիայն ածանցավորման հարց չէ: Թե ինչպիսին է լինելու կերպը, բոլոր դեպքերում կախված է խնդրի բնույթից. ինչպիսի գոյականի հետ գործ ունենք, ընդհատականի՞, թե՞ անընդհատականի[8]:

---

[3] **Ասատրյան Մ. Ե.,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2002, էջ 280:

[4] **Սևակ Գ.,** Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955:

[5] **Ջահուկյան Գ.,** Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 291:

[6] **Աղայան Է. Բ.,** *Լեզվաբանության ներածություն*, Ե., 1953, էջ 334:

[7] **Koschmieder E.,** *Zeitbezug und Sprache, Berlin, 1929.*

[8] Այս կարգերի մասին տե՛ս **Փոլադյան Մ.,** *Լեզու և գրականություն*, Ե., 1998:

Անցնենք ժամանակներին: Թվում է, թե այստեղ ամեն ինչ ասված է, ճշմարիտ է, և այլևս ասելիք չկա: Ավաղ, ժամանակների հարցն էլ, հատկապես հայերենում, լուրջ վերանայման կարիք ունի: Վերցնենք թեկուզ մի այսպիսի անսպասելի հարց՝ ապառնին ժամանա՞կ է, թե՞ եղանակ: Ի դեպ, ի՞նչ է իսկապես եղանակը... Ավելի ճիշտ, ե՞րբ է այն սկսվում…

Դեմքի կարգը, իր հերթին, կարիք ունի ընդլայնման և որոշ բացատրություններ: Ինչո՞ւ է ենթական, երբ դեմքն արդեն տրված է բայում, դառնում «ավելորդություն», ինչպես Աբեղյանն է կարծում: Որևէ լեզու երբեք չի հանդուրժում «ավելորդություններ»: Եթե դրանք կան, նշանակում է, որ ավելորդություններ չեն, այլ անհրաժեշտ են իմաստաբանական հավելյալ նրբերանգներ արտահայտելու համար:

Վերջապես, հատուկ քննարկման կարիք ունի հենց *բայ* հասկացության ըմբռնումը. միայն *գործողություն* և *եղելություն* ասելով՝ մենք այն ամենևին չենք սպառում: Բայերի դասակարգումը իրագործված է ընդհանրապես ձևաբանական կանոնների հիման վրա, այնինչ դա նախ *ճանաչողական* բնագավառի խնդիր է: Եթե ավելի մանրակրկիտ ձևով դիտենք հարցը, ապա բայական ամեն մի խմբի մեջ հարկ կլինի քննել և հասկանալ, թե միտքը նախ ի՞նչ է արձանագրել և ի՞նչ ձևով: Մենք կտեսնենք առաջին գրքում, որը հիմնականում հետազոտում է կերպի հարցը, թե, օրինակ, ինչպես են կազմակերպված շարժման բայերը մտքի տարածքում, ինչպես են նրանք, ըստ այս կամ այն լեզվի լեզվային հիմունքների, նշում կամ *ճանապարհը*[9] կամ *շարժումը*, կամ էլ *շարժման կերպը:*

Բայական հարցերին նվիրված սույն գիրքը ունի հետևյալ կառուցվածքը.

Հատոր առաջին

1. Կերպ
1.1 Բառային կերպ
1.2. Քերականական կերպ

Հատոր երկրորդ

1. Եղանակ
1.1 Եղանակը խոսքում
1.2 Եղանակը խոնարհման մեջ

Հատոր երրորդ

1. Ժամանակ
1.1 Ժամանակը սահմանականում
1.2 Ժամանակը մյուս եղանակներում
2. Դեմք
2.2 Դերանվանական դեմք
3. Թիվ
3.1 բայական թիվ
3.2 Թիվ և կերպ

Կերպը

Բառային կերպը

[9] *Ճանապարհ* հասկացության մասին տե՛ս **Փոլադյան Մ.,** *Ժամանակ, տարածք, անձ*, Ե., 2003:

Կերպերը, ըստ Աբեղյանի, «ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը, մի որոշ ժամանակակետի՝ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ»[10]: Բնորոշումը թվում է վերջնական և անժխտելի: Այսուհանդերձ, փորձենք քննել Աբեղյանի բնորոշումը «ավելի մոտիկից»: Այն հիմնված է երկու հասկացության վրա՝ գործողություն և ժամանակ: Այս երկու հասկացությունները, ինչ և ինչ պատճառներով, ամենևին չեն քննարկված հայեցակարգային մակարդակում: Ոչինչ չի ասվում այն մասին, թե ինչպես են նրանք հասել *լեզվին*, ինչ ճանաչողական ճանապարհներով ...

Գործընթացը մոտավորապես նույնն է, ինչ այբուբենների ծագման ներքին մեխանիզմը, օրինակ, միջագետքյան այբուբենի «ստորգետնյա» ձևավորումը: Վերացարկումը խտացնում է, երբեմն նույնիսկ հեռացնում որոշ հատկանիշներ:



Ճանաչողական դաշտում աշխարհից եկած ամեն մի բան կամ էակ նրա տիպաբանությունն է, որը ներկայանում է հետևյալ ձևով.



[10] **Աբեղյան Մ.,** *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1974, էջ 299:



Գործընթացը կներկայանա հետևյալ ձևով.

ներգործական գործընթաց
նյութական գործընթաց
չեզոք գործընթաց
ներգործական գործընթաց
մտային գործընթաց
չեզոք գործընթաց
ներգործական գործընթաց
խոսքային գործընթաց
չեզոք գործընթաց
ստացական գործընթաց
հարաբերակցական գործընթաց
որոշիչ գործընթաց
նույնականացման գործընթաց
գոյաբանական գործընթաց
ինչ-որ բանի կամ էակի օգտին կատարված գործընթաց
չեզոք գործընթաց

տեղավորված գործընթաց

առանց տեղի գործընթաց:

Ինչ վերաբերում է բայական հիմքին, ապա այն, այսպես ասած, սկզբնական, արտակարգ խտացրած, ճանաչողական և իմաստային կծիկ է /.../. զանազան հատկանիշները միատեղված են մեկ մոլեկուլի մեջ, մեկ ձգողական ուժի ներքո, իրար հակված տասնյակ ատոմների պես: Եթե ճանաչողական դաշտը արձանագրում է արտաքին աշխարհից եկող պերցեպտը, ապա իմաստային դաշտը նույն պերցեպտին տալիս է բառային գոյություն, այն արդեն պատկանում է փոխաբերական դաշտին:

ՏԵՄՆԵԼ (պերցեպտ) ---------- ՄՏԱԾԵԼ (հասկացողություն)

Ըստ Հալիդեյի[11], անցումը աշխարհից խոսքին տեղի է ունենում հետևյալ ձևով.

IDEATIONAL BASE

CONTENT SELECTION

DISCOURSE GOALS

TEXT ORGANIZATION

REALIZATION

SPEECH/TEXT

Ամենայն հավանականությամբ, բառային միավորի արտադրանքը պատահականություն չէ. անցումը աշխարհից դեպի ճանաչողական դաշտ և նույնիսկ հնչյունական ձևավորումը ենթարկված են կոնկրետ հայեցակարգային օրենքների: Սույն գործընթացում առաջնային է ճանաչողական դաշտն իր պատերներով[12]: «Իմաստաբանական կառուցվածքը պայմանավորված հասկա-ցական կառուցվածք է»,- գրում է Լանգակերը[13]: Այստեղ տեղ են գտնում և՛ ժամանակը, և՛ կերպը: Սակայն զգույշ, ժամանակն այս կծիկում միմիայն ներունակ ներկայություն է, այսինքն՝ բառային հասկացողություն: Սրան հետագայում ավելանում է քերակա-նական հասկացողությունը՝ կերպային ածանցները (-ան, -ոտ) և մորֆեմները:

Ներունակ ժամանակը նմանապես ներունակ կերպ է, կարելի է նույնիսկ ասել՝ *այն նախ կերպ է*: Բաշխումը ժամանակային սանդղակի վրա հետարվածություն է՝ իրականացված ժամանակային վերջածանցներով: Ժամանակային կետը, որում տեղ է գտնում իրադարձությունը, իրականում պրեդիկատին ուղղակիորեն չի վերաբերում. նախ տեղի է ունենում որևէ բան, և այդ բանը հաջորդ փուլում ստանում է ժամանակային պարզաբանում:

---

[11] **Halliday M. A. K.**, *The Linguistics Scientific and Language the Teaching, London, 1965.*

[12] Այս մասին տե՛ս Փոլադյան Մ., Ժամանակ, տարածք, անձ:

[13] **Langacker R. W.,** *Noms et verbes, in Communications N 53, Stanford University, 1991, p. 108-109.*

Տեղաշարժը տարածքում նմանապես տեղաշարժ է ժամանակում: *Գնալ* բայը արտաքնապես (դրսից) նշում է միայն տարածքը, բայց *գնալ որևէ տեղ* գործընթացը պարունակում է նաև ժամանակ, ինչը չի նշվում բայում: Պատահում է և հակառակը. նշվում է ժամանակը և ոչ տարածքը՝ *Սաշան քնեց երեկոյան իններից մինչև հետկեսօրյա չորսը*:

Բիկերտոնը[14] իրավացիորեն նշում է, որ նախորդող և արդեն փորձարկված ժամանակի ընկալումն արտահայտվում է ընդհանրապես բառայնացման միջոցով. ժամանակային դինամիկան սպառվելով սկսում է իր տեղաշարժը դեպի գոյականը, այսինքն՝ վերցնում է ածականի գործառույթը: Արդեն մանկական լեզվի էվոլյուցիան, ըստ Բիկերտոնի, ցույց է տալիս գործընթացի բնույթը. երեխան նախ արձանագրում է ճշգրիտ վիճակներ: Հետագայում անցնում է ժամանակային արձանագրմանը՝ *նախորդող/հաջորդող* հարաբերություններին: Կերպային համակարգն հիմնում է ժամանակայինը. ավարտված գործողությունը բերում է անցյալը, կատարվողը՝ ներկան, կատարվելիքը՝ ապառնին: Սակայն կերպային համակարգը նախ իրադարձություն կազմող միավորների ներքին հարաբերությունների կարգավորումն է: Որակական դրսևորումները միշտ նախորդում են քանակականներին. միտքը նախ արձանագրում է երևան եկած փոփոխու-թյունները: Ընդհանուր գործընթացն անցնում է հետևյալ փուլերով.

1) հարաբերությունները ճշգրիտ ընկալման և ժամանակային ընդլայնման միջև.

2) ներկա պահի հասկացողությունը.

3) ժամանակի հասկացողությունը.

4) տարածաժամանակային նշանի ստեղծումը.

5) հիշողության առաջացումը.

6) տևողականության հասկացողությունը.

7) ձևի հասկացողությունը:

Սույն փոփոխությունների ընկալումը, սակայն, անհնարին կլիներ առանց դրանց տարածության գոյության: Սա նշանակում է, որ ամեն մի ստորոգման հիմքում առկա է գոյականական և ածականական կազմավորում:

Օբյեկտը (խնդիրը), որպես հավաքի վայր, կայունացնում է իրադարձի տևողականությունը: Իրադարձությունը վերջանում է, երբ ուշադրության դաշտից անհետանում է օբյեկտը (բանը կամ էակը): Իրադարձությանը ամբողջականություն է տալիս օբյեկտը: Օբյեկտի բացակայության դեպքում կայունացումը իրագործվում է սուբյեկտի՝ ագենսի կողմից, որն իր վրա է վերցնում օբյեկտի՝ պացիենսի գործընթացը:

Բառաիմաստային կծիկում միտքը նախ նշում է գործընթացի տիպը՝ ըստ իմաստաբանական դերերի: Այն երկու տեսակի է՝

1) մի գործընթաց, որն անցողական է (դասական քերականություններում՝ ներգործական սեռը), այսինքն՝ անցնում է ագենսից (գործող անձը)՝ պացիենսին (կրող անձը) (*telic verbs*):

---

[14] **Bickerton D**., *What do Children do when they Mark Past Sense ? Texas Linguistics for Forum, 1982.*

2) մի գործընթաց, որը մնում է ագենսի ոլորտում՝ առանց անցնելու պացիենսին (*atelic verbs*).

Բայի տելիկությունը կամ էլ ատելիկությունը կախված է աշխարհից եկող իրադարձության բնույթից: Աշխարհը շարժման մեջ է, և լեզուն ջանում է արձանագրել ամեն մի շարժում: Չկա խոսքային արտադրանք, երբ չկա շարժում. անշարժ աշխարհը ոչինչ չի հաղորդում: Տելիկությունը կամ էլ ատելիկությունը որոշվում է չորս հատկանիշներով.

1/ + / - վերացական, այս հատկանիշը տարբերում է մատչելի բանը / գործընթացը անմատչելիից,

2/+/- ուղղակի, չափավորում է պատճառի դաշտը և շարժումը,

3/+/- լրիվ, նշում է այս կամ այն փաստարկի անցումը մի ուրիշ փաստարկի,

*4/+/- կենդանի, ն*շում է ագենսի դաշտը:

Ինչպես ասեցի, իրադարձությունն ամբողջությամբ անհնար է արձանագրել: Արձանագրված է միայն այն, ինչ ուշադրությունն է նկատում իր ընտրողական դաշտում, այն, ինչ ուռուցիկ է: Ահա ինչպես է այս գործընթացը պատկերացնում Ջեյմսը [15].



Fig. 33.

Վերցնենք *պարել բայ*ը. արձանագրված է նախ շարժումը, բայց պարը քանի՞ շարժումներից է կազմված: Այստեղ դրանք «խտացված» են մեկ կծիկի մեջ: Հենց այդ շարժումներն է վերականգնում հնդիկ քանդակագործը, երբ բազմապատկում է թևերը նկարագրելու համար Շիվայի պարը.

[15] **James H.,** *Elucidations of Meaning, Linguistics and Philosophy, 1989.*

Երբ բայը տելիկ է, ճանաչողական-իմաստային կծիկը փորձում է հաստատել այն պահը (պահերը), որի միջոցով հետագայում հնարավոր կլինի մտովի վերականգնել ամբողջ գործընթացը: *Գնալ* բայը, օրինակ, արձանագրում է գնալու պահը և տեղը՝ կանխենթադրելով հասնելու տեղը և պահը: *Նա գնաց* շարույթը նշում է տեղը և անուղղակիորեն հասկացնում, որ *Նա* պետք է հասնի ինչ-որ տեղ և ինչ-որ ժամանակ:

Ինֆերենցիալ (վերականգնված իմաստ) ձևով են կառուցված բոլոր հոգեբանական բայերը՝ *վախենալ*, *զայրանալ* և այլն: *Զայրանալ* բայը արձանագրում է հիմնականում ագենսի ռեակցիան (որն ի միջի այլոց այս բայում ավելի նման է ագենսի) և ենթադրում զայրույթի աղբյուրը:

Մինչ այժմ հայերենի քերականություններում բայը դիտվում էր որպես մի փակ, ամբողջական երևույթ: Բայց ինչպես փորձեցի ցույց տալ, այստեղ պահանջվում է ատոմիստական մոտեցում: Բայը կազմող ներքին փուլերը կարելի է ուսումնասիրել խնդրառության միջոցով, ամբողջական գործընթացին դրանց համամասնական մասնակցությամբ: Այսպիսի խնդրառությանը Դոութին տալիս է *incremental theme* անվանումը: Օրինակ, *John drinks a glass of water* նախադա-սությունում *խմել* գործընթացը կապված է *ջրի բաժակ* խնդրի հետ. բաժակի ամեն մի քանակ առաջխաղացում է տալիս գործընթացին, հիմնում այն:

Բացառյալ *կայուն* բայերը (օրինակ, *լինել)*, որոնցում չկա որևէ առաջխաղացում, մնացած բոլոր բայերում հարկ է զանազանել մի կենտրոնական, հիմնավորող, բացող փուլ (*inchoative*) և փակող փուլ (*stativing)*: Պատճառ կանխենթադրող բայերը (օրինակ, *մթնել)* կազմված են հետևյալ կերպ՝ *X CAUSE [y be dark] CHANGE]]:*

Այսպիսին են նույնպես շարժման բայերը. *վազել* հիմքը կազմում է իմաստային «սիրտը», իսկ խնդիրն այստեղ բաշխվում է բացող և փակող փուլերի վրա՝ *Ողոսը վազեց տուն*: Ուղիղ խնդիրը ինչ-որ կերպ հանդիսանում է ամբողջական գործընթացի չափանիշը:

Միայն մեկ փուլի վրա են կառուցվում (չեն նշում պատճառը) հետևյալ բայերը.

1. Հաղորդակցություն նշող (*touch*)
2. Հոգեբանական (*know*)
3. Պերցեպցիոն (*hear*)

Այս բայերը տելիկ չեն: Այժմ մանրամասն ուսումնասիրենք տելիկ բայերը:

Տելիկ բայերը

Կատարվածություն ցույց տվող տելիկ բայերը.

Այսպիսի բայերը գործունեություն հասկացությանը ավելացնում են կատարվածություն հասկացությունը (օրինակ, *տուն կառուցել*):

Առանց լրացման այստեղ շատ դեպքերում դժվար է որոշել բայի պատկանելությունը. օրինակ, *ուտել* բայը ո՞ր խմբին է պատկանում. ատելիկ գործունեություն ցույց տվող, թե՞ տելիկ կատարվածություն ցույց տվող բայերի:

Ընդհանրապես ատելիկ կայուն և գործունեություն ցույց տվողները պարզ բայեր են, այսինքն՝ կազմված են մեկ գործընթացից. բացող և փակող փուլերը նույնն են:

ГЛАГОЛЬНАЯ СИСТЕМА И ПРОБЛЕМА ВИДА

ПОЛАДЯН М. А.

Резюме

Современный анализ глагольной системы во всем объеме невозможен без учета мыслительных операций, сопутствующих формированию того или иного ее проявления. Глагол и его категории обуславливаются мыслительными операциями познавательного процесса на пути от перцепта к концепту.

С этой точки зрения подробного рассмотрения требует, в первую очередь, категория вида и определение его реальной роли в глагольной системе.

В статье обсуждаются вопросы типологии вида, а также предлагается подробная структура общей проблематики глагола.